2-րդ ԴԱՍԱՐԱՆ

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

ԹԵՄԱ 8 – ՁԱՅՆ ԵՎ ԼՈՒՅՍ

Ուսուցչի նյութերի փաթեթ

© Լուսինե Ալեքսանյան

ԹԵՄԱ – ՁԱՅՆ ԵՎ ԼՈՒՅՍ

ԴԱՍ 1 (48) – ՈՐՏԵՂԻՑ ԵՆ ԳԱԼԻՍ ՁԱՅՆԵՐԸ

Նպատակը – Օգնել տարբերակելու և ճանաչելու շրջապատում հնչող ձայները: Հասկանալ, թե ինչպես են առաջանում ձայները, որոնք են համարվում ձայնի աղբյուր, հասկանալ, որ ձայները լինում են թույլ և ուժեղ և որքան հեռվից են հնչում, այնքան թույլ են:

Վերջնարդյունքները

2Շ.Տ.Շ.ՁԼ1 Բերել ձայնի աղբյուրների օրինակներ:

2Շ.Տ.Շ.ՁԼ1ա Ցույց տալ, որ հեռվից ձայնի ուժը թուլանում է:

Անհրաժեշտ պարագաներ

Տարբեր կենդանիների և երևույթների (քամի, անձրև, կարկուտ, ամպրոպ) ձայների, երաժշտության ձայնագրություններ, հովհար, քանոն, զանգ, գոնգ, փուչիկներ: Կարող եք օգտվել այս ռեսուրսից, որտեղ նկարագրված են հետաքրքրաշարժ փորձեր https://nsportal.ru/detskiy-sad/raznoe/2017/03/27/master-klass-dlya-pedagogov-opyty-so-zvukami-dlya-doshkolnikov

Ընթացքը

Ողջ դասը կարելի է կազմակերպել բակում, բաց տարածքում:

1. Ուսուցիչը դասն սկսում է հարցերով՝ կապ ստեղծելով զգայարաններ թեմայի հետ, վերհիշելով, թե ինչպես ենք ընկալում աշխարհը, ինչով ենք լսում մեր շրջապատում հնչող ձայները: Փորձում են հասկանալ, թե ինչը կարող է ձայն հանել: Երեխաները սկզբում կասեն այն ձայնի աղբյուրները, որոնք սովորաբար, առանց ներգործության, ձայն են հանում, օրինակ՝ կենդանիները, մարդիկ:
2. Երեխաների հետ կարելի է դուրս գալ բակ և միասին լսել շրջապատում հնչող, լսվող ձայները՝ մարդկանց, մեքենաների, քամու, ծառերի, խողովակների, թռչունների և այլն: Պետք է խրախուսել, որ երեխաները որքան հնարավոր է

շատ ձայներ տարբերակեն: Դա կնպաստի ուշադրության կենտրոնացմանը, ձայները տարբերակելուն, կողմնորոշմանը: Ուսուցիչը նրանց ուշադրությունը պետք է հրավիրի նաև այն իրողության վրա, որ ձայները մեզ օգնում են կողմնորոշվելու տարածքում, զգուշանալու: Օրինակ՝ եթե մեքենայի ձայն են լսում, որը մոտենում է, պետք է զգուշանան և աջ ու ձախ նայեն, որպեսզի հասկանան, թե որ կողմից է մոտենում մեքենան և այլն:

3. Ապա կարող են խաղալ զվարճալի խաղ: Ուսուցիչը կարող է կենդանիների նկարներով քարտեր բաժանել երեխաներին և հրահանգել յուրաքանչյուրին իրեն բաժին ընկած կենդանու ձայնը հանել, իսկ մյուսները փորձեն կռահել կենդանուն:
4. Ուսուցիչը կարող է ձայնագրություններ բերել կամ հեռախոսով գտնել կենդանիների ձայներ ու միացնել, որպեսզի երեխաները կռահեն, թե ինչի ձայն են լսում, հետո կարելի է երևույթների ձայներ միացնել՝ քամու, անձրևի, ամպրոպի, հետո՝ կոտրվող ապակու, մետաղների հարվածելու, փայտի, ճիպոտի և այլն: Այնուհետև կարելի է երաժշտություն լսել կամ տարբեր նվագարանների ձայներ և փորձել կռահել, թե ինչ գործիք է նվագում: Շատ կարևոր է, որ երեխաները լսեն, տարբերեն ձայները: Ուսուցիչը կարող երեխաներին ցույց տալ քանոնի, հովհարի թափահարման օրինակով, որ բոլոր իրերն էլ կարող են ձայն հանել, եթե դրանք թափահարենք կամ դրանց հարվածենք:
5. Ապա ընթերցում են փոքրիկ տեքստը ձայնի աղբյուրների մասին:
6. Հաջորդ աշխատանքը կարող են կատարել խմբերով՝ յուրաքանչյուրը մեկ նկարի շուրջ: Փորձեն կռահել, թե նկարում պատկերված իրականության մեջ ինչ ձայներ կարող են լսվել: Շատ կարևոր է, որ երեխաները սկսեն օգտագործել *բարձր, ցածր, աղմկոտ, խաղաղ, երգեցիկ, վախեցնող* բնորոշիչները ձայների մասին:
7. Այնուհետև ուսուցիչը ցույց է տալիս զանգը՝ անշարժ կամ գոնգը և տալիս նշված հարցերը: Երեխաները հասկանում են, որ քանի դեռ դրանք անշարժ են, ոչ մի ձայն չեն հանում, բայց բավական է հարվածել կամ թափահարել, և դրանք կինչեն, կզնգան: Ապա կարդում են փոքրիկ տեքստը: Ուսուցիչը բացատրում է, որ առարկաները թափահարելիս տեղի է ունենում օդի տատանում, որն էլ ձայն է հանում: Երեխաները կարող են համոզվելու համար փուչիկներ փչել, ապա բերանը նեղացնելով՝ փորձել դուրս բերել օդը, կտեսնեն, թե ինչ աղմուկով է օդը դուրս գալիս փուչիկից:
8. Վերջում փորձում են խաղ խաղալ: Ազատ տարածքում կանգնում են տարբեր հեռավորության վրա և միմյանց պարզ հրահանգներ տալիս, օրինակ՝ մոտ արի, հեռու գնա, ձեռքերդ վեր բարձրացրու, ոտքերով դոփիր և այլն: Կարևոր է, որ

ուսուցիչը երեխաներին զգուշացնի, որ եթե լսում են՝ պետք է կատարեն հրահանգները: Իսկ հրահանգները տվողներին ասում է, որ պետք է տարբեր բարձրության ձայնով ասեն նույն հրահանգը՝ մի քանի անգամ կրկնելով: Խաղի իմաստն այն է, որ երեխաները հասկանան՝ ձայնը հեռվից ավելի թույլ է լսվում և մոտ գտնվողներն ավելի լավ կլսեն հրահանգները: Կարելի է մի քանի տարբերակով փորձն անել՝ նույն բարձրության ձայնով հրահանգը տալ՝ հեռանալով ու մոտենալով:

9. Տնային հանձնարարություն:
10. Ձևավորող գնահատում:

ԴԱՍ 2 (49) – ԼՈՒՅՍ ԵՎ ՄԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակը – Օգնել ճանաչելու լույսի աղբյուրները, տարբերակել բնական և արհեստական լույսի աղբյուրները:

Վերջնարդյունքներ

2Շ.Տ.Շ.ՁL2 Բերել լույսի աղբյուրների օրինակներ՝ բնական և արհեստական:

Անհրաժեշտ պարագաներ

Փոքրիկ անթափանց արկղ՝ վրան անցք, վերևում փոքրիկ դռնակ, որը կարելի է բացել և փակել՝ ինչպես նկարված է սովորողների համար դասանյութում: Լապտեր:

Ընթացքը

1. Ուսուցիչը սովորողներին դիմում է հարցերով, որոնք երեխաներին ստիպում են մտածել, թե ինչ գործողություններ են անում, երբ հայտնվում են մութ տեղում: Երեխաներն անմիջապես կհիշեն հեռախոսի լապտերի մասին, որը մեծերը հաճախ միացնում են, երբ հայտնվում են մութ տեղում:
2. Ապա ուսուցիչը նախապես պատրաստած արկղը, որի մեջ կարող է փոքրիկ փափուկ իր դնել, որը առանց լույսի չի երևա, տալիս է երեխաներին և հանձնարարում է հերթով նայել անցքից և ասել, թե ինչ են տեսնում արկղի ներսում: Ապա նույնը կրկնում են վերևի պատուհանիկից լապտերով լուսավորելով: Երեխաներն անմիջապես կհասկանան, որ իրերն ու առարկաները կարող ենք տեսնել, երբ դրանք լուսավորված են, այլապես դրանք չեն երևում: Այստեղ պետք չէ խորանալ, թե առարկաներն անդրադարձնում են լույսը, դրա շնորհիվ են երևում, դա նրանք կանցնեն դասընթացի մյուս դասարաններում: Պարզապես պետք է մտածել տալ և թեմայի սկիզբը դնել:
3. Այնուհետև կատարում են հաջորդ առաջադրանքը: Փորձում են մտածել հարցի շուրջ և նկարել: Խմբով քննարկում են, գտնում իրենց պատասխանները և դրան համապատասխան նկարում, որից հետո մեկնաբանելով ներկայացնում

են դասարանին: Աշխատանքները ներկայացնելուց հետո ուսուցիչը մեկնաբանում է վանդակում գրված փոքրիկ տեքստը:

4. Ապա երեխաներին տրվում են լույսի աղբյուրների նկարներ, որոնց կողքին նրանք նշումներ են անում, թե որն է բնական, որը՝ արհեստական աղբյուր: Փորձում են մեկնաբանել, թե ինչու են այդպես կարծում: Որից հետո ծանոթանում են վանդակում գրված տեքստին և փորձում են իրենց նշումներում ուղղումներ կատարել, եթե ինչ-որ բան սխալ են կատարել: Կարող են և՛ ինքնաստուգում անել, և՛ փոխադարձ ստուգում (ձևավորող գնահատում):
5. Տնային հանձնարարություն: